



ՀԱՆՂԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)

Ի ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

(ԹԻԻ 12)



ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յարկեանի առթիւ, Երուանդ Սրմաթեշխանեան. — Պուլկարիա եւ Ռու-
մանիա, Գամեր Արշալիր. — Գիսական արձագանգ (շահարտ), Տօրթ. Յ Ար-
թինեան. — Վերջարդյսին, Վահան Մանուկեան. — Պոլսական Նամակաւորի,
Մեղրեկ. — Ժէօն-Թիւրքեռուս Բողոքը. — Կիսամսեակ :



ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒՆԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

»» Շ Ա Ի Ի Ղ ««

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուլկարիոյ համար ասորեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք :
Արատասահմանի » ասորեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք :
Ամերիկայի » » 2 1/2 ասլար

“ Շ Ա Ի Ի Ղ ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեգէն, նամակ, յօդուած, լրագիր և գիրք՝ պէտք է
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շարիդի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատա-
րակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԳԻԾ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

Թիւ 12

ՅՈՒՅԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ

Ապաիւլ-Համիտ, հին և նոր ժամանակներու ամենէն մեծ մարդասպանը, օգոստոս 19ին ամենց իր թագաւորութեան քսանհինգ օրոց անց Եւրոպացի զիւանազանները, ամենքն ալ մեծ ու պզտիկ ոճրագործներ, փութացին իրենց յարգանքին հաւաստիքը մատուցանել Երբարդի ճիւղին, որ անշուշտ կուշտ մը խնդաց այդ ապուշ խեղկատակներուն փութկուտութեանը վրայ, զանոնք շարուած տեսնալով շուրջը այն դահին, որ կրթնած է երեք հարիւր հազար զանկերէ ձեւացած հսկայական պատուանդանի մը:

Եւրոպական մամուլին պաշտօնական մասը ներբողալից շեշտելով յիշատակեց այս մեծ օրը, որ բարորութեան անմոռանալի շրջանի մը հանգրուանն է եղեր թուրքիոյ համար!!!:

Այսպէս ուրեմն, Սուլթան Համիտ

իր վաղցուցած արեան հոսանքներուն վրայէն իր մաղիլը երկնցունելով անեղօրէն կապտակէ քրիտանեայ ու քաղաքակիրթ Եւրոպան, կարծես պատժելու համար այն եղեռնական լուծիւնը որով անիկա դիտեց սուլթանական կարմիր նախճիրները, անոնց չափ մը դնելու նեղութիւնն իսկ յանձն չտանելով:

Գերմանիոյ կայսրը, նմանը չտեսնուած սրիկայ, իր պաշտօնակիրքին մէջ գրեւտուած է բոլոր այն բաները որոնք անհնարին է որ ըսուին Սուլթան Համիտի և անոր քսանհինգ արուան թագաւորութեան համար:

Եւ այս ամէն եզածներէն յետոյ, դժուար չէ կարծեմ հաստատելը թէ աշխարհը՝ իր ստեղծուելէն ի վեր՝ ամենէն անբարոյական, ամենէն վայրենական շրջանը բոլորեց քսաներորդ դարու դրան մօտիկը, սաքանի մը օրերու միջոցին:

*
* *

Օգոստոսը այլապէս նշանակալից ամիս մըն է հայութեան համար: Ապագային, հայկական օրացոյցնե-

րու մէջ այդ ամիսը ամբողջովին կարմիր տառերով պիտի գրուի : Յատէրժական տօն մը պիտի հիմնուի հայ գիւցազուններուն համար որոնք սուրբ ձեռքերնին ինկան բռնապետական ահեղ կազմակերպութիւն մը գողացնելով :

Քաբէլներու և Գնունիներու յիշատակը հարկաւորապէս պիտի անմեռ մնայ . անոնց ստուերը միշտ պիտի չըջի հայութեան մէջ , հոգի ու խրախոյս ներշնչելով անոր , յաւիտեան կռուելու հաւատքը ամրապնդելով անոր մէջ :

Վասնզի , իսկապէս , ամէն ժամանակէ աւելի պէտք ունինք մաքառելու յարատե ոգիին ու ամրապնդ հաւատքի : Պաշտօնական Եւրօպան , որուն ձեռքն է չարչարուող ժողովուրդներուն ճակատագիրը , իր ընթացքով կարծես ըսել կուզէ թէ դիւանագիտութեան տեսարակէն սրբած է երեք հարիւր հազար հայ նահատակներուն հաշիւը : Սուլթան Համիա , առանց ունէ մէկէն նեղուելու , ծնծղայով ու շեփորով կը կը տօնէ իր եղեռնագործութիւններուն քսան եւ հինգ տարուան Յորեղեանը : Հայաստանի մէջ կը վերսկսին մեծաքանակ կոտորածները . Սպաղանք կը ջնջուի Հայաստանի աշխարհագրութեան քարտեանէն : Արիւնով ծածկուած գազան մը , Էնիս փաշա , կիլիկիոյ վրայ կը նետուի զայն վողստելու համար : Պոլիս , ազգագաւառ ու ոճ

րագործ պատրիարք մը՝ հայութեան ուղիսինահաս վէրքերուն քով անկարկիր եւ անտարրեր՝ փորն ու քրտակը պտարելու հոգով մտազբաղուած է գիշեր ցորեկ : Հայաստանէն դուրս , աշխարհի սրիշ մասերուն մէջ եղելութիւններ կան , որոնք ստուերի մէջ կը ձգեն մեր ազէտալի կացութիւնը :

Այս տեսակ պայմաներու մէջ է սակայն որ մեզի պէս ազգ մը պիտի երեւան ընդէ իր գոյութեան իրաւունքին մեծ ապացոյցները , վասնզի այն ազգերը միայն իրաւունք ունին տպրելու որոնք ընդդիմամարտութեան , սովորութեան ու զարգացման սքանչելի յատկութիւնները հղորապէս ի հանդէս կը բերեն : Մեր մինչեւ հիմակուան գոյութիւնը այս յատկութիւններուն խտայումն է ըլի : Հետեւապէս հայ ազգը իրաւունք ունի տպրելու՝ հակառակ ոճրագործ Սուլթանի մը բնածնման դիւային ծրագիրներուն հակառակ անարգ ու կեղծաւոր դիւանագիտութեան մը բոլոր մանուածապատ խաղերուն :

Մեր բոլոր ճիգը պիտի ըլլայ յոսահատութեան դէմ մաքառիլ , թող չտալ , ամէն գնով , որ սկսուած ահաւոր , վճռական մաքառումը կէս ճամբան մնայ , նոյնիսկ փոքրիկ դադար մը ունենայ : Խոհեմութեան ու շրջահայեցութեան անունով քարոզուած բոլոր մեռելական , պատուելիական վարդապետութիւնները

ուրիշ բանի չեն ծառայեր եթէ ոչ համոզել ժողովուրդը ուր քամակը ճկէ բռնապետութեան լուծին տակ որոշուած ժամանակամիջոցի մը մէջ լուռ ու մունջ կոտորուելու ջընջուելու համար ամբողջովին :

Մեզի առաջնորդ ունինք անձնուիրութեան, քաջութեան և դիւցազնութեան վսեմապանծ օրինակներ, մեր թմրութեան և յուսահատութեան վայրկեաններուն մեր յեղափոխութեան նախազոհներուն սրտապնդիչ, ոգեւորող այդ դէմքերը միայն աշուրնուս առջև բերենք, անոնք անհունապէս աւելի գերազանց դեր պիտի խաղան մեր փրկութեան գործին մէջ քան բոլոր պառաւամիտ իմաստասէրները, որոնք, հայուն իսկական վիճակին անտեղեակ, ամբողջփեղ դրութիւններ կը քարոզեն անպատակաւ հեղինակութեամբ մը :

Երուանց Մեմֆէիսեան



ՊՈՒԼԿԱՐԻԱ ԵՒ ՌՈՒՄԱՆԻԱ

Այս պահուս, պալզան թերակղզիի այս երկու սահմանակից երկիրներուն յարաբերութիւնները յոյժ ձգտուած են. պահ մը նոյն իսկ պատերազմի լուրջ երկիւղներ ծագեցան :

Պատճառը Մակեդոնիան է, հէզ և բազմաչարչար երկիր, մեր ողբալի հայրենիքին պէս, զոր պուլկարները

մահիկի դժխեմ ճիրաններէն փրկել կուզեն, մինչ Ռումանիան տասնեակ տարիներէ ի վեր արգելք կը հանդիսանայ այս հայրենասիրական ծրագրին :

Տարակոյս չիկայ որ եթէ օր մը Մակեթոնիան Պուլկարիոյ կցուի, այս վերջինը մեծ եւ զօրաւոր ու հետեւաբար երկիւղալի զրացի մը պիտի դառնայ Ռումանիոյ համար : Ահա այս հաւանականութեան առաջքը առնելու համար է որ Ռումանիան դէմ է Մակեդոնիոյ ազատման :

Ռումանիան՝ այս խնդրին մէջ իրեն գործիք ըրած է Մակեթոնիոյ քուցօ-վլահները կամ այլապէս ցնցուները : Ասոնք ասկից 10-15 տարի առաջ պուլկարներու, յոյներու, սերպերու և ալպանիացիներու մէջ կորսուած տարր մըն էին և կը խօսէին բարբառ մը անձոռնի, խառնիճաղանձ, որուն մէջ մերթ ընդ մերթ ուումաներէն բառեր ալ կուգային հնչել : Ռուման կառավարութիւնը ուղածը գտած էր : Այս քուցօ-վլահները իրեն ցեղակից հոչակեց, հաստատեց թէ անոնք ալ, ուումաններուն պէս, Տրայանոս կայսեր կողմանէ Հռոմէն բերուած գաղթականներ են, և հետեւաբար ուժ եւ մղում տուաւ անոնց : Մանաստրի և Սելանիկի և մակեթոնական այլ և այլ քաղաքներու մէջ բազմաթիւ կանոնաւոր դպրոցներ բացաւ ու այդ անձոռնի ամբօխը կըթեց, մարդ ըրաւ : ուումէն-մակեթոնական ընկերութիւն մը հիմնուեցաւ, բազմաթիւ մակեթոնացի պատանիներ Պուքրէշ բերուեցան և անոնց՝ համալսարանական բարձրագոյն կըթութիւն արուեցաւ : Երեկուան խնդ ու կրակ, ազտոտ և բոկոտն սիմիօսիները, փաստափան, բժիշկ, ուսուցիչ ըլլալով

իրենց հայրենիքը դարձան եւ իրենցները ալ աւելի զարգացուցին. այնպէս որ այսօր, Մակեդոնիոյ 200,000ի չափ քուցօ-վլահները հետի են արհամարհելի քանակութիւն մը կազմելէնդհակառակը. եւ հետեւապէս մշտակայ եւ ներքին թշնամի մըն են Մակեթոնիոյ՝ Թուրքիոյ ձեռքէն ազատելուն:

Տարակոյս չիկայ թէ Թուրքիան ամէն դիւրութիւն տուաւ քուցօ-վլահներուն վերակենդանութեանը. հակառակ պուլկարներու եւ նոյն իսկ Ֆէնէրի պատրիարքարանին՝ բազմաթիւ պէրաթներ շնորհեց անոնց: Կորամանկ թուրքը, այս միջոցով, քրիստոնեան քրիստոնէին դէմը կը հանէր:

Հետեւաբար այս մակեթոնական խնդրին մէջ Թուրքիոյ եւ Ռումանիոյ շահերը բոլորովին զուգընթաց են. եւ ճիշդ այս մակեթոնական խնդրին համար է որ Սթուրզաբի կառավարութիւնը այնքան ամօթալի ընթացք մը ունեցաւ հայոցս հետ՝ Թուրքիոյ հաճելի ըլլալու համար: Թուրքիոյ հաճելի ըլլալը, քուցօ-վլահները զօրացնել է. եւ ասոնց զօրացումը Մակեդոնիոյ ազատումը՝ այսինքն Պուլկարիոյ մեծնալը արգիլել է. կամ ուրիշ բառերով, Ռումանիոյ համար պուլկարական ապագայ վտանգին ստաշքը սուներ է:

Բայց, քուցօ-վլահները զարգացընելու խնդիրը պուլկար հայրենասէրներու ետանդը չէր կրնար պաղեցնել. Սօֆիաի կոմիտէն միշտ կը գործէր. անիկա բազմաթիւ ճիւղաւորումներ ունի ոչ միայն երկրին՝ այլ եւ ուղեւանական բոլոր քաղաքներուն մէջ:

Ասկէց առաջ, Ռումանիոյ հողին վրայ քանի մը դաւաճաններ սպան-

նուեցան պուլկարներու ձեռքով: Ամիս մը առաջ, սակայն, լիսէի ուսուցիչ Ստեփան Միխըլլեանու, նոյնպէս սպանուեցաւ Սթոյան Տէմիթրօֆ պուլկար երիտասարդին ձեռքով: Միխըլլեանու, ծագումով քուցօ-վլահ, Պուլկար Թեր-լուէ թերթին տնօրէնն էր եւ յոյժ կծու յօդուածներ կը գրէր պուլկարաց դէմ, եւ իր արինակիցներուն զարգացմանը համար մեծագոյն կոռուզն էր: Միխըլլեանուի սպանութիւնը ցասումի ընդհանուր գոչ մը բարձրացուց ամբողջ Ռումանիոյ մէջ: Մարդասպանը խոստովանութիւններ ըրաւ, որոնց հետեւանքով 200է աւելի պուլկարներ ձերբակալուեցան, որոնք ցարդ բանտը կը մնան. ուրիշներ արտաքսուեցան երկրէն. բազմաթիւ կոմիտէներու գոյութիւնը երեւան ելաւ. համալսարանի պուլկար ուսանողները նմանապէս արտաքսուեցան. մամուլը վերջին ծայր անարգական լեզու մը սկսաւ գործածել Պուլկարիոյ դէմ: Անցեալները, Պուրքէշի մէջ հսկայ միթիւնկ մը գումարուեցաւ 40,000 հոգիներու մասնակցութեամբ: Ատենաբանութիւնները անպատմելի աստիճան խիստ եւ նախատական եղան. պուլկարական գրոշը պատռեցին, անարգեցին, սոնակոխ ըրին եւ ամբոխը աճկցիներով օդը թնդացուց. իսկ կառավարութիւնը խիստ ծանուցադրեր զրկեց Սօֆիա, նոյնին օրինակները հաղորդելով նաեւ պետութեանց եւ Թուրքիոյ:

Պուլկար կառավարութիւնը նախ հպարտ եւ խրոխտ պատասխան մը տուաւ, ըսելով թէ ինք պատասխանատու չէ ու եւ է պուլկարի կողմէ գործուած ոճրի համար. Ռումանիան Սօֆիաի կոմիտէին ջնջուիլը եւ Սա-

րաֆոֆի պատժուիլը պահանջեց, որոնք, ըսաւ, Սօֆիաի ուսմէն հպատակներէն բռնի դրամ առած էին ըսպառնալիքով, յօգուտ մակեթոնական յեղափոխութեան:

Երկրորդ ծանուցադրով մը պուլկար կառավարութիւնը խոստացած է այս վերջին կէտը դատական քննութեան յանձնել:

Մինչ այս մինչ այն՝ մտքերը զըրզրուած մնալէ չեն դադարիր այս տեղ. այլ եւ այլ քաղաքներու մէջ հակապուլկարական ցոյցեր կը պատրաստուին, պուլկարները կը հալածուին. Սօֆիա պոլսոյ մ՝ ընելու խօսքը բերնէ բերան կը թռչի:

Վերջին օրերը պուլկար մամուլը եւս սկսած է իր կողմէ արժանավայել պատասխաններ տալ ուսմէն մամուլին, ըսելով թէ «պատերազմի մը պարագային, Ռումանիոյ անկախութիւնը պիտի վտանգուի». ուսմանացիներուն կատաղութիւնը չափ ու սահման չունի պուլկարական այս խրոխտութեան առջեւ: Այժմ տեսնենք թէ ի՞նչ երեւոյթ պիտի ստանայ ուսմէն-պուլկարական այս վէճը, որով արդէն եւրոպական մամուլն ալ սկսած է զբաղիլ:

Տարակոյս չիկայ թէ Ռումանիոյ քաղաքանութիւնը այս կէտին մէջ թրքասէր եւ վատ քաղաքականութիւն մըն է. ինք որ քաղաքակիրթ երկիր ըլլալու յաւակնութիւնը եւ համբաւը ունի, արդեւք ըլլալ կուզէ հարիւր հազարաւոր քրիստոնեաներու փրկութեան, եւ սա՛ լոկ անձնասիրական նկատումներով:


Բայց անշուշտ պուլկար քաջարի յեղափոխականները չի պիտի ընկըրկին այս կարգի արգելքներու հանդէպ, այլ միշտ անվհատ առաջ պիտի

գիմեն, լաւ կազմակերպուելով, լաւ պատրաստուելով, յարմար առթին՝ խուժելու համար այն երկիրը որ աշխարհագրականապէս եւ ցեղագրականապէս Պուլկարիայինն է եւ անոր պէտք է ըլլայ, երիտասարդ երկրին վերջնական կազմութիւնը առաջ բերելու համար:

Չի մոռնամ ըսելու թէ քուցօ-վըլահները եւս ապագայի նոյն երազները կը սնուցանեն, եւ ո՞վ գիտէ թէ ուսմէն պետութիւնն ալ, որ արդէն Թրանսիլվանիան, Պէսարապիան, Պուքովինան իրեն կցել կը ձգտի, ապագայի համար յայնկոյս դանուբեան նոր Ռումանիա մը ստեղծել չի մտածեր:

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻՒՐ

Պուրէէ:



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ժ Ա Ն Տ Ա Ր Տ

Շատնոց ի վեր է՛ր րոպան մնացած էր ժանտախտը:

Նախորդ գարերու այս տհաւօր պատուհասը յիշատակի կարգ մնացած՝ իբրեւ սուսուպել միայն կը նկատուէր. սակայն ժանտախտի երեւումը, այս վերջին ամիսներուն, Օթրլթօի և շրջականերուն ու Միդլիոյ մէջ, այժմէութիւն ունեցող խնդիր մը կը դառնայ զոր ուսումնասիրելը սուբլիմալ է:

Հինգ տարիէ ի վեր ժանտախար Հոնկ ֆոնկէն սկսեալ այցելեց մինչեւ Ալէքսանդրիա և սակայն Եւրոպա չեկաւ : Ժե. դարուն էր միայն որ ահ ու մահ սփռուեցաւ աշխարհիս ամէն կողմը . անկից ի վեր Եէրսէնը ունեցանք , այն Ֆրանսացի դիանա-կանը որ երկար յոգնութիւններէ վերջ մեզ տուաւ արգելիչ շիճուկը . ունեցանք նաեւ Գիթազաթայ ճաւնացին և բաթթէօրեան կաճառի դիտնականներուն հոյը որոնք մեզի ճանչցողցին ժանտախարի միքրոպը , անոր յտակութիւնները ու սովորութիւնները , այնպէս որ այսօր շատ աւելի զէնքեր ունինք ձեռքերնիս մաքառելու այդ պատուհասին դէմ , քան ասկից առիւններ առաջ :

Առ հասարակ ընդունուած է որ երեք դիտաւոր համաճարակներ իւրեցի բոյները ունին աշխարհիս մեծ դետերուն աէլթաններուն մէջ : Գնուելքան տեւական է Գանդէսի օփերը . դեղին տենդը՝ Միսիսիքիի բերանը ու ժանտախար Կեղոսի ճախճախաւ աէլթային մէջ : Արգարեւանցեալ ժանտախարի համաճարակները մեծ մասամբ իջիպատուէն ժագում առած և տարածուած են Միջերկրականի օփերուն վրայ ու մինչեւ գացած են Մարսիլիա :

Չանտախարի արիչ բոյն մըն ալ Հիմուրայո լեռներուն ստորտար կը զբաւնաի , Եսեննամի մէջ , ուսկից 1434ին սեւ ժանտախար սկսելով անցաւ

Պարսկաստանէն , փոքր-Ասիան և 13 տարի , Թափառական հրեային նման , Թափառելով հասաւ Լեհաստան , Գերմանիա , Ֆրանսա , Անգլիա , Իտալիա , Նորվեգիա եւ այլն ու 25 միլիոն հոգի կտտորեց : Ամէն մարդ այդ մահաաշաժամի միջոցին ունեցածը կը թողուր և լեռները կը քաշուէր , դէպի ամառի տեղեր : Միմիայն Ֆիօրէնցայի մէջ (իտալիա) 60,000 հոգի մեռան ու Պոքաչիոյ տանտօրեակը այդ արհաւիրքի օրերուն ծնուդն է , որպէս զի ժանտախարէ փախտականները ժամանցի համար զբօսանք (!) ունեւան :

Կան նաեւ ժանտախարի մանրէին սերիչ մէկ քանի բոյները , ինչպէս Պոյքալ լճին մօտերը , Ռուսօ-չինական սահմանագլուխը և Ուկանտայի մէջ (Ալբրիկէ) մեծ լիճերու մօտերը , Անդր-Սիպերիական և ապագայ Անդր-Ալբրիկեան գծերուն վրայ որոնք օր մը շատ վտանգաւոր դեր մը պիտի խաղան համաճարակի տարածումին մէջ :

Թուրզան , Պարսից Շահին նախորդ բժիշկը , կը նշանակէ նաեւ իբրեւ վառարան ժանտախարի իջիբառի աւաղանին վերի մասը :

Տաճկաստան որ կը գտնուի բոլոր բոյներուն մօտիկը , կեդրոնը կամ շարժը , յաճախ տառապած է ժանտախարէն , միայն Պոլսոյ մէջ 1803ին 150,000 և 1813ին 110,000 հոգի մեռած են :

*
* *

Ժանսախսի մանրէն. — Անյիշատակ ժամանակներէ ի վեր ժանսախսին ի նշ ըլլալը չէր դիտուած: Կաթոլիկ կղերը օգոտ քաղերով այս տգիտութենէն հրեաներուն վրայ կը ձգէր յանցանքը և զանոնք ժողովուրդին վրիժառութեան կը մատնէր: Գիտունները երկնային երեւոյթներու կը վերագրէին, ինչպէս գիտաւոր ասաղի մը երեւումին կամ երկու երեք մուրթակներու միեւնոյն զծի վրայ հանդիպումին եւոյն. սակայն Բաթթէօր իր անհունապէս փոքրեւորու վրայ ըրած հետազոտութիւններովը այս ամենուն վերջ մը դրաւ և իր աշակերտը՝ Եէրսէն՝ պարզեցառեղծուածը ու միջբոլոր երեւան հանեց (1894):

Ժանսախսի միջբոլոր առատօրէն կը գտնուի հիւանդին ուռած խաւարաններուն մէջ որոնք երունդ (bubon) կը կոչուին, իսկ մարմնոյ մնացեալ մասերուն մէջ քիչ քանակութեամբ կայ, զանազան ձեւեր ունի գտնուած միջավայրին համեմատ: Խաւարաններուն մէջինները գաւազանիկներու կը նմանին, անեղիւնով կը ներկուին ու այն ատեն գաւազանիկներուն ծայրերը ներկուած մէջտեղը և պայծառ, սնդոյն կը ներկայանան:

Արգանակի մէջ մշակուելով կը բնական մը կառնեն և համրիչի շղթայի

մը նման կը շարունակուին ու կը սկսին դեղիննալ:

Կենդանական մարմնէ դուրս ու ժերնին կը կորսնցնեն և թէեւ կը շարունակեն սպրիլ, սակայն բացարձակ կերպիւ վասնդաւոր չեն ըլլար: Եէրսէն Չինաստանի մէջ վարակուած տան մը հոյը 4-5 հարիւրորդամէթր խորութեամբ առնելով, մէջէն գաւա ժանսախսի պատիւներ որոնք թէեւ երունդներուն մէջ գտնուածներուն նման էին, բայց ժահրոտ չէին: Սակայն եթէ այս պատիւները կրկին մտնեն մարմնոյ կամ կենդանական հիւթ պարունակող տարրի մը մէջ՝ անմիջապէս կու ժոզնան, կը կազմակերպուին և աւելի շուտ ու զօրաւոր կերպով կը ներգործեն. այս պատճառաւ է որ ժանսախսի համաճարակը նախ նուազ համեմատութեամբ կը սկսի և հետզհետէ կը տարածուի կը ներարկուի ու շրտ կողմը ահ ու սարսափ կը սփռէ:

Եէրսէն օր մը իր աշխատանոցին մէջի սատկած ճանճերը ժողվեց և քամելով դրաւ մանրագէտին տակ և տեսաւ որ ժանսախսի մանրէները կը վխտան անոր մէջ. փորձի համար ներարկելով այդ քամեցէն հնդիկ ճագարի մը, տեսաւ որ 48 ժամ յետոյ, ախսին որոշիչ նշաններով, ներարկուած հնդիկ ճագարը սատկեցաւ:

Պաթցարօֆ, պուլկարացի զին-

ւորական բժիշկ մը, դիտած է որ մուկի մը քիթին մէջ ժանտախտի ժահրը (virus) գրուելով կենդանին մեռած է ժանտախտային թոքատապէս. նաեւ ժանտախտաւոր և առողջ հնդիկ ճագարներ միեւնոյն վանդակին մէջ պահուելով՝ առողջները շուտ մը վարակուեցան քթի և շնչառութեան դործարաններու միջոցաւ :

Մարդոց մէջ ժանտախտը կը տարածուի իրարմով, օդի, հողի, ըզգեսաներու, մուկերու և միջատներու միջոցաւ :

Ելունդներէն զտա խուխին (crachat), լորձոնքին, խլինքին և արիւնին մէջն ալ միքրոպները կը վերտան, որոնք շրնալով փոշի կը վերածուին — թէեւ ակար — կը ցրուին օդին մէջ ուրիշները վարակելու համար :

Սաստիկ ջերմութեան մէջ պատիւը շատ կը տկարանայ և այս դիտնալով է որ Տէժընէզ ֆրանսացի բժիշկը Եգիպտոսի մէջ ժանտախտէ առապող ֆրանսական բանակին սիրտ տալու համար նըշգըրակ թաթխելով վարակուածի մը թարախին մէջ, ինքզինքին ներմուծած է :

Չգիտաներու միջոցաւ տարածուելը հաստատուած իրողութիւն մըն է. Ա.քեայի վանքին մէջ երկու տարի առաջ մեռած ժանտախտաւորներու զգեսաներով լի սնտուկ-

ները բացուելով պատճառեղած են ակտին երեւան գալուն :

1896 ին Պոմպոյէն Լոնտոն վերադարձող երկու նաւաստիներ օր մը յանկարծ հիւանդացած են. քննութեամբ հասկցուած է որ Պոմպոյէն գնուած վզի թաշկինակներու դործածութենէն սկսած է հիւանդութիւնը :

Մուկերը, միջատները, լուերը և ճանճերը վարակողի ամէն հանգամանքը ունին :

1894 ին ֆանթոնի մէջ միայն հարաւային դռան պահպանը 2200 սաակած մուկ ժողվել տուած է : Եէրտէն դիտած է որ մուկերը լուերու խայթոցներէն իրարու կը փոխանցեն հիւանդութիւնը : Չինացիք լաւ զիտնալով այս պարագան, երբ մուկերու ժանտախտը սկսի՝ կը ձրգեն կը հեռանան իրենց գտնուած տեղերէն :

Ժանտախտը մտրդուն կրնայ անցնիլ խայթուածներէ և մարմնոյ ճեղքուածներէ : Չեռքերէ մեռա գտած ժանտախտին ուռած խաւարտները — ելունդները — երեւան կուգան անութիւն տակ և եթէ գլխի մէկ կողմէն միքրոպը ներս մտած ըլլայ, այն ատեն վզին վրայ կամ ծնօտին տակ կերեւան անոնք :

Ժանտախտի հիւանդութիւնը երկար չտեւեր, առ առաւելն 4-5 օրուան մէջ մարդ կը մեռնի. առաջին օրէն իսկ անդը 39 տախ-

ճանէն կը բարձրանայ մինչև 40,41. հիւանդը կը զաւազնէ, կը ցնորի, յաճախ կը փսիսէ, սաստիկ փորհարութիւն կունենայ և կը մեռնի անզգայութեան, թմբիրի (coma) մէջ:

Ժանտախտի այս սովորական ձևէն զատ դիտուած է որ վարակուողները թոքառապէ ալ կը մեռնէին:

Անցեալ տարի վիէննայի մէջ բրոֆէսոր Միւլլէր ժանտախտի թոքառապէն մեռաւ իր աշխատատանցին մէջ՝ ժանտախտէ սատկած մուկէ մը վարակուած ծառան խնամելու միջոցին:

Սեւ ժանտախտը ամենէն սոսկալին է և փտարիւնութիւնով (septicémie) կը մեռցնէ:

Պատիւը մանկրով արիւնին մէջ լուր խայթուածքէ մը կտամ վարակուած գոնակի մը վէրքէն, կը թունաւորէ զայն: Երեք օրուան մէջ հիւանդը չարաչար կը մեռնի տենդով և զաւանցանքներով: Բոլոր գործարաններուն մէջ արիւն կը հոսի, քիթէն, բերնէն, աչքերէն, աղիքներէն, փամփուշտէն եւայլն: Մօրթը կը ծածկուի արեան կարմիր բիծերով որոնք ընդհուպ կը սեւնան:

(Նորոշման)

Տօքթ. Յ. ԱՐԹԻՆՆԱՆ

Նանսի



ՎԵՐՋԱԼՈՅՍԻՆ

- Բարի իրկուն:
- Աստու բարին:
- Նորէն կը խմես:
- Ի՞նչ ընեմ. օղիէն մօտիկ բարեկամ չունիմ. հրամայեցք, ձեզի ալ կը բաւէ:

Ըւ առանց սպասելու որ կրկնէ իր հրաւէրը, տեղաւորուեցայ մօտիկը, գեանին վրայ:

* * *

Կը սիրեմ վերջալոյսը. կը սիրեմ մարը մտնող արեւուն շիջելափառ ծածանումներէն յետոյ՝ դիտել լոյսին յաջորդական երանգափոխութիւնը: Եւ ասոր համար յաճախ կը թողուի քաղաքը, Ֆիլիպէն, եւ մինաւորիկ կուղեւորէի Բունարճըզ, անոր բարձրագիր գագաթէն վայելելու Ռոտորներու եզերքը մարմնող աժգունութիւններուն օրհասական աղուորութիւնը:

Ու իմ այս թափառումներուս մէջ գրեթէ միշտ կը հանդիպէի մէկու մը, պատուած, թափթփած զգեստներով, ցանցառ, աղտոտ, գզգզուած ու աղեբէկ մազերով ու մորուքով մարդու մը, որ հոն, Բունարճըզի հիւսիսային կողմը, թմբիներու եւ աքասիաներու մատղաչ պուրակի մը մէջ նստած, օղիի խոշորկեկ շիշ մը առջին, կը խմէր ու կը խմէր շարունակ:

Ինձի պէս բնութեան բանաստեղծական տեսարաններէն ու աղուորութիւններէն հետաքրքրուած մէկը չէր երևեր. կոնակը արեւմուտք դարձուցած, աչքերը տարտամօրէն պարա-

պուժեան մէջ ցցած, անշարժ ու լուռ միօրինակ գիրքի մը մէջ կը խմէր մինչև վերջին կաթիլը շիշին, բայց ոչ ալքոլամոլի մը հապճեպովը:

Առաջները գրեթէ անուշադիր ու անտարբեր կանցնէի իր մօտէն, բայց քիչ քիչ իր գէմքին տարօրինակ ար-
յայտութիւնը, իր նստուածքին ու խմելու միօրինակ ձեւն ու մինակու-
թիւնը ուշադրութիւնս գրաւեցին:

Իր դիմագծութեանն յայտնի կը տեսնուէր որ հայ մըն էր, գաղթա-
կան հայ մը, եւ վիպագրի կոչտ ու
քիչ մըն ալ անգութ հետաքրքրու-
թիւնով կուզէի մօտենալ անոր, իմա-
նալ իր ով ըլլալը, եւ հասկնալ թէ
ի՞նչ բանէ մղուած կուգար հոն ամէն
իրիկուն, մինակուկ, ալքոլի թմրե-
ցընող ազդեցութեանը ենթարկուիլ:
Թերեւս խոշոր ու խորին վիշտ մը
ունէր, որուն կուզէի թափանցել:

Բայց վայրենի բան մը կար անոր
նայուածքին մէջ, դաժան, դառն
ցոլք մը որ ետ կը հրէր ամէն մեր-
ձեցում:

Անհրաժեշտ էր զդուշաւոր քայլեր
առնել, չխրտչեցնելու համար զանի-
սկսայ աւելի մօտէն անցնիլ, քիչ մը
վերեւօքը կենալ: Ինք գրեթէ ան-
տարբեր իմ ներկայութեանս, կը շա-
րունակէր անշարժութեան մէջ մնալ,
ինք իր մէջ առանձնացած:

Օր մը բարեւեցի զինքը. բարեւս
առաւ, եւ յունիսեան վերջալոյսի մը
հուսկ ուրեմն ընդունեցի իր մօտ
նստելու հրաւերը:

* * *

Մարդը իր նիհար ու մազոտ ձեւ-
քովը օղիին գաւաթը լեցուց ու ինձի
տուաւ. յետոյ հատ մըն ալ ինք
խմեց:

Ինչպէս ըսի, կենթադրէի որ
այրող խորունկ վիշտ մը անոր հոգին
կը խորովէր. աշխարհքէ, կեանքէ
զզուած դառնացած էր. եւ կը պատ-
րաստուէի ուղղակի հարցում մը ընել,
բայց յարմար սկիզբ մը չէի կրնար
գտնել. սակայն, ինք, յանկարծ
խղեց լուռութիւնն ու ըսաւ.

— Պատմեցէք:

Ես սկսայ պատմել, ինչպէս բնա-
կան է, հայու թշուառ կեանքը Թուր-
քիոյ մէջ, ուր հանգիստ, ապահովու-
թիւն ըսուած բանը չիկայ, ուր
Թուրք գայլերը շարունակ կը փողո-
տեն հայ գառնուկները, եւ երջանիկ
սեպեցի մեզ որ կրցած ենք Թուր-
քիոյ գժողքէն փախչիլ եւ ազատ եր-
կիր ապաստանիլ:

Մարդը յանկարծ աչքերը վրաս
տնկեց եւ խիստ կերպով մը ըսաւ.

— Ի՞նչ, Թուրքիայէն դուրս եր-
ջանկութիւն, հանգիստ, պատի՞ւ կայ
մեզի համար. չէ՞. մի հաւտար, հոս
աւելի գէշ է, Թուրքիայէն աւելի վատ:

Մինչ ես կը պատրաստուէի բողոքի
շարժում մը ընել, մարդը շարունա-
կեց.

— Կեցի՛ր, թերեւս հետաքրքիր ես
իմանալու թէ ինչո՞ւ համար ամէն
իրիկուն հոս կուգամ, ինչո՞ւ մինա-
կուկ կը նստիմ ու կը խմեմ, ո՞վ եմ
եւ եւ ի՞նչ բանս այսբան յունտես
ըրած է զիս այս երկիրներուն համար:
Մտիկ ըրէ:

* * *

«Գաւառացի մըն եմ. բայց շա-
տոնցուրնէ Պոլիս եկած ու հոն հաս-
տատուած եմ: Երկար սարիներ չարա-
չար աշխատելէ եւ հազարումէկ նե-
ղութիւն կրելէ յետոյ վերջապէս յա-

Չողեցայ փոքրիկ դերքի մը տէր ըլլալ: Բնական թաղիս մէջ աղքատիկ աղուորիկ աղջկան մը հանդիպեցայ, սիրուցի զայն ու հետը ամուսնացայ:

Վեց տարի Պոլիս ապրեցանք միասին. երջանիկ կեանք մը անցուցինք. երկու զաւակ ունեցանք, եւ քանի ընտանիքս կը շատնար գործերս ա՛լ աւելի առաջ կերթային: Հակառակ տարիքս առնելուս միշտ՝ առջի տարփանքով, առջի գործովանքով կը սիրէի, կը պաշտէի կինս, որ քանի կերթար կաղուորնար: Կրնամ ըսել որ ամուսնութեանս այդ վեցամեայ շրջանին մէջ երբէք կնոջս դժգոհութիւն պատճառելու ընթացք մը, վարմունք մը չունեցայ. ինչպէս նաեւ բնաւ չկասկածեցայ թէ օր մը կրնար ան ա՛լ չսիրել եւ կամ խարել զիս: Միշտ առջի պարկեշտ ու ամչկոտ աղջիկը մնացած էր, ու պատուհանէն գուրս նայած չուներ:»

Մարգը հոս քիչ մը կանգ առաւ եւ հատ մըն ալ կլլեց:

* * *

Յետոյ շարունակեց.
«ԾՅԻ գէպքերը, ինչպէս գիտես, հայերուն հանգստութիւնը խանգարեցին. Պոլիս ունեցած խանութս աւարի տրուեցաւ, եւ ես հողիւ կրցայ անձս ադասել:

Այնչափ մօտէն տեսած էի մահը որ ա՛լ չէի կարող Պոլիս ապրիլ, եւ ընտանիքս առած Պուլկարիս եկայ եւ հաստատուեցայ Վառնա:

Ի՞նչ քիչ մը դրամ կար. հոն գործի սկսայ, եւ աղէկ գէշ կապրեցնէ՛ ընտանիքս: Տարի մը վերջը գործերս աւերուեցան, եւ ես ստիպուեցայ խանութս փոխել եւ նոր գործ փնտռել:

Պզոտկուց վարժուած ըլլալով չարքաչ կեանքի մը, սիրով կը կատարէի ամէն տեսակ գործ, որքան ալ ծանր ըլլար. ինձի համար, ցաւալին այն պիտի ըլլար որ կինս կամ զաւակներս զրկանք մը, նեղութիւն մը կրէին, պակաս մը ունենային:

Բայց օր մը եկաւ որ ամէն գործ պակսեցաւ, եւ հակառակ ջանքերուս՝ անկարող գանուեցայ օրակա՛ն ապրուստս հայթայթել Վառնաի մէջ:

Կինս առաջուան պէս կը սիրէր զիս, կամ այնպէս կը կարծէի. համակերպիլ կը ցուցնէր մեր վիճակին. բայց ես ինքզինքս յանցաւոր կը դատէի որ չէի կրնար ընտանիքս փրկել սպանացող անօթութենէն:

Վառնայի մէջ ա՛լ գործ չիկար, եւ ստիպուեցայ թողուլ ընտանիքս եւ քաղքէ քաղք թափառիլ: Տարւական շատ պէտքերէ ինքզինքս կը զրկէի կամովին, կնկանս, զաւակներուս հաց հասցնելու համար: Վերջապէս յաջողեցայ Ս. գիւղաքաղաքին մէջ հաստատ ու ապահով գործ մը ձարել:

Վառնա դարձայ ընտանիքս առնելու: Սակայն հոն անյուսալի ընդդիմութեան մը հանդիպեցայ: Կինս չէր ուզեր ինձի հետ մեկնիլ. կըսէր թէ իրեն համար շատ դժուար պիտի ըլլար երկրորդ պանդխտութեան մը սկսիլ, բոլորովին օտար միջավայրի մը մէջ ապրիլ, մինչդեռ հոն քիչ ու շատ ընտելացած էր՝ բարեկամուհիներ, ընկերուհիներ ձարած:

Երկար ատեն անուշ խօսքերով ջանացի համոզել զինքը որ մեր այս թափառական կեանքին մէջ երբ չենք կրնար դառնալ թուրքիս, ստիպուած պէտք է այդօրինակ զրկանքներ յանձրն առնել: Մտնաւանդ որ ունեցած

գործովս չէի կրնար թէ՛ ես ապրիլ առանձին եւ թէ ընտանիքս ապրեցընել: Կինս միշտ յամառած կը մնար. չէր ուզեր ինձի հետ գալ. վերջապէս ճարահատ սպառնացայ որ եթէ ինք չիզայ՝ ես զաւակներս առած պիտի մեկնիմ: Երբեք մտադրութիւն չունէի այս սպառնալիքս գործադրել. որովհետեւ չէի կրնար բաժնուիլ կընծմէս. բայց կը յուսայի որ լոկ այս սպառնալիքովս պիտի հնազանդէր ինձի ու հետս գար: Մինչեւ այդ օրը ոչ մէկ կասկած ունեցած էի իր սիրոյն եւ պարկեշտութեանը վրայ. կինս համոզուիլ ձեւացուց եւ խօսք տուաւ շարաթ մը վերջը հետս ճամբորդել:

Յաջորդ իրիկունը երբ տուն վերադարձայ, ինչ տեսնամ. տունս ամբողջ պարպուած էր. զաւակներս մերկ գետնի վրայ կը ճըւային, կուլայի՛ն:

Կինս փախած էր հետը տանելով տան մէջ բոլոր գանուածները»:

*
* *

Մարդը, պահ մը լռելէն ետքը, նորէն շարունակեց.

«Եթէ անմիջապէս խելքս չթռցուցի, եւ կամ կայծակէ զարնուածի պէս յանկարծամահ չեղայ, պատճառը զաւակներս էին, որ գիրկս իյնալով ու վիզս պլլուելով պատմեցին թէ ինչպէս մայրիկը առտուն կանուխ, իմ մեկնելէս քիչ վերջը ամէն բան ժողվելով ելեր գացեր էր բռնելով թէ շուտով պիտի գայ զիրոնք ալ առնէ տանի. ու ալ չէր եկեր:

Չեմ կարող պատմել թէ այդ վայրկենին ինչեր անցան մէջէս. ու անիծեցի ծնած օրս, անիծեցի այդ կնկանը հանդիպած ժամս:

Մեր հանած ազմուկներէն՝ քանի մը դրացիներ եկան եւ շատ մը բաներ պատմեցին: Իմ բացակայութեանս, տունս սկսեր է յաճախել տեղացի մարդ մը, որուն հետ անշուշտ փախած ըլլալու էր կինս:

Անմիջապէս լուր տուի ոտիկանութեան. երկու օր ետքը գտանք անոնց հետքը. Պուրկազ փախած էին. հոն փութացի. գտայ կինս, որ սակայն դատաւորին ներկայութեան յայտնեց որ ա՛լ չի սիրեր զիս եւ չուզեր ապրիլ հետս: Խելքս գլխէս գնաց. ա՛խ աս սիրած կինս, զաւակներուս մայրը բոլորովին փոխուած էր. կուրանար ամբողջ անցեալը, կուրանար իրեն համար բոլոր քաջածներս, իրեն համար ունեցած անհուն սէրս:

Թէպէտեւ կը զգուէի անոր շնական քայլէն ու լիբը խօսքերէն, բայց անդին զաւակներս կային, ու անոնց համար աղաչեցի պաղատեցայ որ դայ զաւակներն առնէ նստի ուզած տեղը: Մտիկ չըբաւ: Ու ես հազիւ կարողացայ դատարանի միջոցով քանի մը անհրաժեշտ կարասիներ առնել ձեռքէն:

Հիմա ինձի բռէ՛. իրաւունք չունիմ միթէ միշտ մարդոցմէ հետի փախչելու: Ըսէ՛, հոս Թուրքիայէն ալ դէշ չէ՞. հոն վախը ունիս թէ յանկարծ կրնաս կորսնցուցնել կեանքդ, պատիւդ կամ ունեցածդ, ու ատոր համար նախապէս ամէն զգուշութիւն ձեռք կառնես. բայց հոս, ազատ երկիր է, ապահով ես, եւ դուռդ բաց կը քնանաս. յանկարծ ամենէն անսպասելի, ամենէն սեւ աղէտը կուգայ գլխուդ: Կը ճանչնամ կինս, ան միշտ հաւատարիմ կը մնար ինձի ու զաւակներուս, բայց մոլորեցուցին

զինքը այս քաղաքակրթեալ երկրի լուսաւորեալ մարդիկները :

Անշուշտ հետաքրքիր եւ իմանալ թէ ի՞նչ եղաւ ասոր վախճանը . կինս յափշտակողը ատեն մը դայն պահելէն ետքը՝ ճամբեց . կինս ուրիշ մը գտաւ , յետոյ ուրիշ մը . եւ թէեւ միշտ ջանացի տուն բերել , մըտիկ չըրաւ : Եւ հիմա կը գտնուի հոն ուր կերթան ասոր պէս խաբուած բոլոր թշուառները : Իսկ դահիճը , զիս , կինս , զաւակներս սպանող դահիճը , պատուաւոր մարդ , ազատ համարձակ կը պաշտի : Պա՛հ , օրէնքը պատիժ մը չունի անոր համար . եւ թերեւս այսօր առանց խղճի խայթի նոր որսի մը կտեւէն է : Եթէ զաւակներս չըլլայի՛ն . . . »

Մարդը լռեց : Իր վայրենի արտայայտութիւնը մեղմացած էր . վիշտը , իր անբուժելի ցաւը աղուորցուցած էր իր գէմքը՝ զոհի մը , մարտիրոսի մը կրեւոյթը սալով անոր :

Վերցուց շիշը եւ ամբողջովին պարպեց : Թաղուեցաւ իր առջի անտարբեր լուծեանը մէջ . կախեց գլուխը վար , գոցեց աչքերը , որոնցմէ արցունքի քանի մը կաթիլներ իր գէմքի խորշոմներէն վար սահեցան :

Արեւը մարը մտած էր շատոնց . իրիկուան ստուերները ջնջեր աւրեր էին վերջաւոյսի բոլոր երանգները , եւ լոկ դեղնորակ պախ գիծ մը կերկըննար հորիզոնին երկայնքը . հովը կը թրթոար ճիւղերուն մէջէն . երկընքին խորութիւններէն աստղեր կսկսէին փալփալել , եւ վարը քաղաքը իր լոյսերը կը վառէր : Մարդը կը շարունակէր մնալ իր անշարժութեան մէջ : Թողուցի զինքը հոն իր ցաւերուն հետ , զոր աշխարհքի վրայ ոչ մէկ բան կրնար սփոփել :

Վ Ա Ջ Ա Ն Մ Ա Ն Ո Ւ Է Լ Ե Ա Ն

Պ Ա Լ Ս Ա Կ Ա Ն Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

Վիճակը շատ տխուր է : Նոյն իսկ Սպաղանքի վերջին կոտորածէն ալ առաջ տխուր էր : Ես այս Օրմանեանին չափ անամօթ եւ անխիճ մարդ չեմ տեսած : Փոխանակ ազդին հետ վշտակընքու կացութեան վրայ , գործերը վարդապոյն ցոյցներու ճիգ մը ունի , որպէս զի իր գերքը չը վտանգուի : Եւ գործ ալ կը հայթայթէ . երկու ամիս է կըրազի գահակալութեան յորբէնանին առ թիւ մատուցանելի ուղերձին գրութեան ձեւին , զարդերուն եւ ճիֆիջի թաշի մէկ մանրանկար կոթողին պատրաստութեամբը , ժապաւէններու գոյներուն ընարութեամբը . եւ լրագիրները կը գրեն այս բաները զինքը ծաղրելու համար , բայց ինք չզգածուիր :

Սասունի վերջին կոտորածին նըկատմամբ տարբեր տեղեկագիր տուած է գեսպաններուն եւ անկիայ չէզըքացնող գիր մըն ալ Բ. Դրան : Այնպէս որ մէկ կողմէն եւք միւս կողմէն մուտք . գէշ առուտուր չէ կարծեմ : Իբրեւ թէ գործէ քաշուած կը ձեւանար , պատրիարքարան չէր գար , պատարագ չէր ըներ , եւ ատենէն ամէն բան կը կարգադրէր , ու կառավարութիւնը գիտէր այս պարագան : Հիմա այդ ձեւակերպութիւններուն ալ նայած չանի եւ ըստ առաջնոյն կը շարունակէ պա-

տարագներն ալ, այցերութիւններն ալ, պառտախօսութիւններն ալ :

Միւս կողմէ հոգի կուտայ կիւրիկիոյ կաթողիկոս ըլլալու, իր խօսքով՝ Պօլէն հեռանալու և ուրիշներու խօսքով երկու պաշտօնները միացնելով արդի պաշտօնին մէջ հաստատուելու համար : Վերջինն ալ հաւանական է, մանաւանդ Օրմանեանի նման մէկու մը համար, երբ եկեղեցւոյ միութիւն, աւանդութիւն և պատմութիւն դրամադրուի ըրած է իրեն ու կառքը քշելու հետամուտ է :

Քայց խապանան, որ օրինակելի և ուղիղ պաշտօնավարութիւն մը ունեցաւ կիւրիկիոյ մէջ, Օրմանեանի ծրագիրները վշրեց բաւական, և ընտրութիւնը անհաւանական դարձած է հիմա : Օրմանեան մէկ յոյս միայն ունի այժմ. կաթողիկոսական ընտրելիներու ցանկ տալ Դրան, որուն մէջէն հարկաւ կարող եկեղեցականները մէյմէկ պատճառով պիտի սրբուին և կարգ մը ապիկարներ ու ինք միայն պիտի մնան, որով գտնուածներուն մէջ լուսագոյնը ըլլալով պիտի ընտրուի :

Ահաւասիկ այս ծրագիրը ջտնջախելու և ազդին մէջ նոր բան մը չը մտցնելու համար է որ կը խօսին վարչութեան եկեղեցական անդամները, մանաւանդ երկու եպիսկոպոսները 5-6 ամիսէ ի վեր : Երկար վիճաբանութիւններէ յետոյ, որոշ-

ուեցաւ քուէի դնել թէ այդ ընտրելեաց ցանկը պէտք է ընդունիլ թէ ոչ : 15 օր առաջ խառն ժողովոյ հանդիսաւոր նիստ մը տեղի ունեցաւ, որուն վարչութեան կրկին ժողովոյ անդամներն ալ ներկայ էին : Օր առաջ հեռագրով պատրիարքը կոնշած էր Այվազեան Յովսէփ եպիսկոպոսը որ Ռօստութիւն վճնուած Տարաւանել գացեր էր : Քուէարկութիւնը երկու ժողով զատ զատ կը կատարեն և պէտք է որ երկու ժողով՝ կրնն և քաղ՝ ուրոյն ուրոյն մեծամասնութիւն ունենան, որպէս զի խնդիրը ընդունուի, ապա թէ ոչ դորժը Ազգային ժողովոյ կերթայ : Քուէարկութիւնը գաղտնի տեղի ունեցաւ. արդիւնք՝ 10 աշխարհականներէ ամենքն ալ «պէտք է ցանկ տալ», 7 եկեղեցականներէ վեցը «պէտք չէ տալ» իսկ Յովսէփ Այվազեան «պէտք է տալ» ըսած էին : Ասով խնդիրը մնաց անլոյծ և պէտք եղաւ Ազգ. ժողովոյ ներկայացնել : Քուէարկութեան այս արդիւնքը տեղեկագրերուն մէջ ալ պատրիարքը դարձեալ իր խարդախութիւնը խառնեց :

Չմուռնամ ըսելու որ արդէն արդիւնքէն շտա ազգուած էր, մանաւանդ իր փոխտնորդին դէմ, որ իր արամադրութեանց համեմատ չէր քուէարկած : Փոխտնակ Դրան դրելու որ երկու ժողովները տա-

րակարծիք են և խնդիրը չէ կառուցողութեամբ, գրեց թէ ներկայ 17 ժողովականներէն 11ը ընդունեցին և 6ը մերժեցին :

Այս օրերս Առլիէն պատասխաներ է թէ քանի որ մեծամասնութիւնը ընդունեց է, շնորհակալ ենք իրենցմէ, ուստի ըստ այնմ գործադրեցեք. բայց, ինչպէս ըսի, Սահմանադրութեան հաստատում օրէն, օրէնք է որ երկու ժողովներու մեծամասնութեամբ քուէարկուի ամէն խնդիր՝ ընդունուած ըլլալու համար : Գործը այս կէտին մէջն է հիմն և յառաջիկայ շարժու նորէն խառն ժողովոյ դումարում կայ, Առլիէի այս վերջին թէզքերէն նկատողութեան առնելու և եղած սխալը սրբադրելու համար :

Օրմանեան իր խաղը խաղալու համար, ամէն ճիգ կընէ որ ցանկը ընդունել ապա անգամ մը, թէպէտ ընտրութիւնը յուսալի չէ : Ժողովուրդը համակրած է խաղաբանին և այսօր ամենէն հաւանական ընտրելին ինք է, եթէ սակայն ընդունի այդ պաշտօնը : Եթէ կրօնական ժողովոյ վախը չըլլար, կը տեսնէիք ինչեր կընէր այս մարդը : Իր հաւատարիմներէն Ռօպէրին միջոցաւ իրատ ամբաստանութիւններ ըրած է պարտա Գրիգորիսին և Մանկունիին դէմ. բայց առ այժմ բան մը ըրած չունին ասոնց, թէպէտ կա-

ռավարութիւնը աննպատակ կը խորհի անոնց նկատմամբ :

Ճամբորդներու համար նոյն դժուարութիւնները և տուրքերու գանձման մասին նոյն խտրութիւնները կը շարունակուին դեռ : Վերջանալու յոյս չկայ. մէկ կողմէն աւտղակ վնասելու պատրուակին տակ կատարածները կը շարունակուին : Սառունի վերջին կտարածը կազմակերպող Պիթլիսի հրամանատար Ալի բաշան ըսեր է թէ, Ախլաթի մէկ քանի գիւղերն ալ պէտք է զարնել : Հարկու ան ալ կըլլայ ի մտոյ :

Հոս պատրիարքը հանդէսներով զբաղած է. պղտիկ բաներ հոգ ըրած չունի և արտասահմանէն եկած գրաւոր սպառնալիքներուն համար ալ, խնդարով կըսէ եղեր « անոնք գուրու արխը են » : Ահաւասիկ արպար մարդ մը որ հայ եղեր է, հայերը շահագործելու համար :

Հիմա կը հարցնեմ. հայ յեղափոխական կազմակերպութիւնները ինչպէս թոյլ կուտան որ ասանկ թշուառական մը ամբողջ ազգը շահագործէ՝ անոր ամենէն ողբալի կացութեան միջոցին :

ՄԺՂՈՒԿ



ԺԷՅՈՆ-ԹԻԻՐՔԵՐՈՒՆ ԲՈՂՈՔԸ

ԺԷՅՈՆ-ԹԻԻՐՔԵՐԸ հետեւեալ բողոքը զրկած են քարիզեան թերթներուն .

Ապաիւլ-Համիտ այսօր կը սօնէ իր թագաւորութեան քսանը հինգամեակը, որ լի է մարդկային տարեգիրներուն մէջ նմանը չափանուած սարսափներով ու ոճիրներով :

Համօրէն քաղաքակիրթ աշխարհը լացաւ այս արիւնկղակ բռնասորին անթիւ զոհերը . բայց դժբախտաբար եւրոպական համաձայնութիւնը դրէթէ բարեկամական կերպով միայն յանդիմանեց զինքը :

ԺԷՅՈՆ-ԹԻԻՐՔԵՐՈՒ ԿՈՒՍԱԿԳՈՒԹԻՒՆԸ ազդուապէս կը բողոքէ այն անիրաւ յօժտրամտութեան դէմ որ ցոյց կը արուի արաստուլօր պատուիրակութիւններ զրկելով ի մասնակցութիւն Մեծ մարդասպանին յորբեւանին տօներուն , աստուածացումը ոճրի և մարդասպանութեան :

Եւրոպա , կարմիր Սուլթանին ուճիրները թող տալով , արդէն մեծ պատասխանատուութեան տակ ինկած էր . զանիկա քաջալերելով հիմակ՝ անոր մեղսակիցը չըլլար ապագայ արարքներուն մէջ :

Մեր կուսակցութիւնը , հաւատարիմ թարգման օսմանեան դժբախտ ազգին , որ՝ քսաներորդ դարուն սեմին վրայ՝ կը հեծէ այս միջինդարեան բռնասորին լծին տակ , կը

յուսոյ թէ եւրոպեան մամուլը , այնքան ազատամիտ ու այնքան վեհոնձն , պիտի մասնակցի մեր իրաւացի բողոքներուն՝ յուէս նշաւակելու համար այս նոր Ներօնը :

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Կ

Նարոյիէն նամակ մը ուղղւած է իտալիոյ նոր թագաւոր վիքտոր-Էմմանուէլ Բ. ի , սպառնալով որ եթէ Ունկէրթօի սպանիչ Պրեսիին պատիժը չթեթեցնէ իր կեանքն ալ վրտանդի տակ է : Նամակը ուղղւած է պալատան Սենեկապանին , պարունակութիւնը հաղորդուելու համար թագաւորին :

— Սուլթանը իր յորբեւանին առթիւ հրամայեց է որ թուրք թերթերը այսու հետեւ զերծ մնան բուլէ : Այս շնորհը կը զլացուի հայ թերթերուն որովհետեւ այս ծախքին բարձունովը մեծ շահ մը պիտի ունենային անոնք , որով հայ մամուլը նպաստաւորուած պիտի ըլլար :

— Սեպտեմբեր 1 ին կը բացուի Հայկական կրթարանը , գիշերօթիկ և ցօրեկեայ : Յաւաջիկայ շրջանին՝ կրթարանը նորանոր բարեփոխութիւններ ներմուծած է իր կազմակերպութեան մէջ :

Отговорникъ Н. Драгулевъ

Печатница «Орбенталъ» — Варна.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Վարժարանիս աշակերտ տալ փափաքող Պատուարժան ծնողաց կը յայտարարեմ որ Հայկական Կրթարանի Գ. տա-
րեչըմանը կը սկսի յառաջիկայ Սեպտեմբեր 1/14 ին , միեւնոյն
ընդարձակ և օգտասուն շէնքին մէջ , առանց փոփոխման ծրա-
դրի և ավակցութեամբ միեւնոյն ուսուցչական մարմնոյն , որուն
պիտի ընկերանայ նաեւ Փռանսացի ընդհանուր հսկող մը :

Լրացուցիչ դասընթացքի աշակերտներուն համար ուսման
առարկաներու մեծադոյն մասը պիտի դասախօսուի Փռանսերէն
լեզուով : Դասաւանդութեան միեւնոյն եղանակը , աւելի նեղ
սահմանի մէջ ու աստիճանաբար , ի դոյժ՝ պիտի դրուի բարձ-
րոյն ու միջին դասընթացքներու համար :

Ուսմանց ու դիտութեանց բոլոր կարեւոր ճիւղերը կ'ա-
ւանդուին :

Օտար լեզուներէն պարտաւորիչ են պուլկարերէնը և
Ֆրանսերէնը , իսկ կամաւոր են անգլիերէնը և գերմաներէնը ,
որոնք պիտի սուանդուին Փռանսերէնով :

Զութակի և դաշնակի դասեր ալ կը արուին մասնաւոր
վճարումներով :

Գիշերօթիկներու համար առողջ սնունդ , կատարեալ մտք-
րութիւն և ընտանեկան խնամք :

Տարեթոշակներուն համար պտտրաստ եմ ամէն զիւրու-
թիւն ընծայել , եթէ անոնց կանոնաւոր վճարումը կանխառ-
ապահովուի ո՛ր և է միջոցաւ :

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ-ՏՆՕՐԷՆ

ԿՐԾՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂ, ԵԱՆԻ

— Գ Ս Ռ Ն Ա —

Երկրորդ քաղ, Շիրյենսիա փողոց, (Սագալլը յեշմէի կից)

Կը ապագրուին հարկէն, պուլիարերէն, դաղղիերէն, յաւ
նարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեատմօ, հասցէատմօ,
հարսանեկան հրատարակիչ, ազգաբարոյժիւն, նամակազրուի,
պահարան, մահազգ, վաճառականական ամէն աեսակի գործեր,
զիւք, լրագիր, և այլն:

Գունաւոր և սևեղօձ գարգազործերու համար ամէն լեզուէ
ձոխ տառեր և մասնաւր գործիքներ կը զանուին:

Մ Ե Ր Խ Ն Ա Մ Ք Ե Ի Մ Ա Ք Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Ի Ն Ե Ր Ը Յ Ո Յ Թ Գ Ի Ի Մ Ա Մ Ս Չ Յ Ե Ր Ի

Ուրի՛ք ֆաղափներէ եկած յանձնարարութիւններ նշու-
թեամբ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).